ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Հոկտեմբերի 7-ին, կիրակի.— Այսօր Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Վազգեն Ա Վեհափառ Հայրապետը Ս. Էջմիածնի Մայր տաճարում, սրբալույս մեռոնի օծմամբ, եպիսկոպոս ձեռնադրեց Արգենտինայի հայոց թեմի առաջնորդ Տ. Գիսակ վրդ. Մուրադյանին, Միացյալ Նահանգների Հայաստանյայց Եկեղեցու Արևելյան թեմի առաջնորդ Տ. Խաժակ ծ. վրդ. Պարսամյանին, Ուրուգվայի հայոց առաջնորդ Տ. Հակոբ ծ. վրդ. Գըլնճյանին և Կանադայի հայոց թեմի առաջնորդ Տ. Հովնան ծ. վրդ. Տերտերյանին:

Հոկտեմբերի 6-ին, շաբաթ օրը, երեկոյան ժամերգությունից հետո, համաձայն կարգաց և կանոնաց Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու, կատարվեց նորընծաների «ընտրութիւն և ուխտադրութիւն»-ը:

Իջման ս. սեղանի առաջ Տ. Գիսակ, Տ. Խաժակ, Տ. Հակոբ, Տ. Հովնան հոգեշնորհ վարդապետները՝ ուխտում են «Հաւատարիմ լինել Սրբոյ Էջմիածնի մինչև ցվախճան կենաց իւրեանց, կալ մնալ հլու հպատակութեամբ ի ներքոյ իշխանութեանն և հրամանաց Սրբոյ Կաթուղիկէ Մայր Աթոռոյս»:

Ընթերցումից հետո նորընծաներն ստորագրում են ուխտագիրը: Ըստ ավանդության ստորագրում են նաև Մայր տաճարի լուսարարապետ Տ. Հուսիկ արքեպս. Սանթուրյանը և Ամերիկայի Հայոց Եկեղեցու Արևմտյան թեմի առաջնորդ Տ. Վաչե արքեպս. Հովսեփյանը:

Հաջորդ օրը, ժամը 11-ին, Վեհափառ Հայրապետը եկեղեցական թափորով առաջնորդվում է Մայր տաճար՝ մատուցելու հանդիսավոր սուրբ պատարագ և կատարելու եպիսկոպոսական ձեռնադրություն: Հայոց Հայրապետին որպես առընթերականեր ուղեկցում են Ռումինիայի և Բուլղարիայի հայոց թեմի առաջնորդ Տ. Տիրայր արքեպս. Մարտիկյանը և Ամերիկայի հայոց Արևմտյան թեմի առաջնորդ Տ. Վաչե արքեպս. Հովսեփյանը: Այս սրբազան ձեռնադրության խարտավիլակի պաշտոնն ստանձնել էր Գուգարքի թեմի առաջնորդ Տ. Արսեն եպս. Բերբերյանը:

Ձեռնադրության հանդիսավոր արարողությանը ներկա էին Հայաստանի Հանրապետության նախարարների խորհրդին առըն-

«Հրաժարիր քո սատանայի և գայթակղիր»

Վեհափառ Հայրապետը օծում է ձեռքը
Տ. Գիսակ եպս. Մուրադյանի

Վեհափառ Հայրապետը օծում է ձեռքը
Տ. Խաժակ եպս. Պարսամյանի

216-90

Վեհափառ Հայրապետը օծում է ճակատը
Տ. Հակոբ եպս. Գըլնճյանի

Վեհափառ Հայրապետը օծում է ձեռքը
Տ. Հովնան եպս. Տերտերյանի

թեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ տիար Ստեփան Վարդանյանը, Երևանի քաղաքային խորհրդի նախագահ տիար Գեղամյանը, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամները, սրբազան հայրեր, Մայր Աթոռի միաբանությունը և պաշտոնեությունը, հայրենի մշակույթի գործիչներ, ուխտավորաբար Մայր Աթոռ ժամանած ափյուռքահայեր և հավատացյալ ժողովրդի հոծ բազմություն, ռադիոյի և հեռուստատեսության ու մամուլի թղթակիցներ:

Մայր տաճարի Ս. Ստեփանոսի սեղանի առաջ սկսվում է ձեռնադրության հանդիսավոր արարողությունը: Ձեռնադրության խարտավիլակ Տ. Արսեն եպս. Բերբերյանը բարձրաձայն ընթերցում է Ձեռնադրության Մաշտոցից հետևյալ տողերը. «Ծնորհազարդ Սուրբ Հայրապետ... զի միաբանք՝ Սրբոյ և Առաքելական Աթոռոյս Էջմիածնի, հանդերձ համօրէն ուխտիւս, այսինքն եպիսկոպոսունք, քահանայք, սարկաւագունք... այլ և իշխանք և աղքատք, խնդիր ունիմք ի բարձրագահ Տէրութենէդ, վասն որոյ հայցեմք աղաչանօք, զի հրամայեսցես մեզ յանդիման լինել մեծանձնութեան քո և բացայայտել զխնդիր մեր»:

Ապա Հայոց Հայրապետի պատասխան «Հրամայեալ է ձեզ ի Տեառնէ՝ յառաջ մատչել և ողջամիտ դիտաւորութեամբ բացայայտել մեզ զոր ինչ խնդրէքդ» ընթերցումից հետո, նորընծաները, ծնրադիր աղոթելով Իջման ս. սեղանի առաջ, համընթաց մոտենում են Հայոց Հայրապետին՝ տալու իրենց հավատի ուղղափառ խոստովանությունը և ստանալու եպիսկոպոսության աստիճաններ: Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը իր աղոթքներով և օրհնությամբ հոգեշնորհ հայր սուրբերին շնորհում է եպիսկոպոսական կոչման յոթ աստիճաններ և համապատասխան զգեստ:

Այնուհետև ձեռնադրության և ս. պատարագի հանդիսությունը շարունակվում է Ավագ սեղանի վրա, ուր Վեհափառ Հայրապետը ընթերցում է ձեռնադրության մեծ աղոթքը. «Դու Տէր, այսօր վերածեր տնօրինութեամբ քո ի քահանայապետական շընորհ, տուր սոցա նմանիլ քեզ՝ ճշմարիտ Հովուիդ, դնել զանձինս իւրեանց ի վերայ ոչխարաց, առաջնորդ լինել կուրաց, լոյս խաւարելոց, խրատիչ անզգամաց, լուսատու տիեզերաց...» (Մաշտոց ձեռնադրութեան): Նորընծաները ծնրադիր, դեմքերը դարձրած դեպի հավատացյալների խուռներամ բազմությունը, «Աստուածային և երկնաւոր շնորհ...» վեհ ու հոգեհույզ շարականի երգակցությամբ, հրաժարվում են աշխարհիկ ունայնությունից: Ապա Հայոց Հայրապետը կատարում է ձեռնադրության և օծման կարգը: Նորապսակ եպիսկոպոսներին տրվում է եպիսկոպոսական գավազան և մատանի:

Մարգարեական, ավետարանական, առաքելական ընթերցվածքներից, սաղմոսներից, շարականներից հետո ընթերցվում է վերջին Ավետարանը և Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով ավարտվում ձեռնադրության արարողությունը:

Ձեռնադրության խորհրդի ավարտից հետո Վեհափառ Հայրապետը նորընծաներին է տալիս իր հայրական պատգամն ու խորհուրդները.

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՔԱՐՈԶԸ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ

(7 հոկտեմբեր 1990 թ.)

«Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ, ամէն»:

Սիրելի հավատացյալ ժողովուրդ, այսօր Մայր տաճարի կամարների ներքո մի հրաշալի սուրբ արարողություն կատարվեց, որով մեր աղոթքներով, մեր երգերով, մեր ծիսական արարողություններով՝ մեր ձեռնադրությամբ և օծմամբ ոգեկոչեցինք Ս. Հոգվո էջքը այստեղ, Միածնաէջ Մայր տաճարում, մանավանդ լուսավորելու համար Սուրբ Հոգու լույսով նորապսակ չորս մեր եպիսկոպոսներին: Բացառիկ սրբազան արարողություն մը, որ մեր նախահայրերը աստվածային ներշնչումով, գեղարվեստական տաղանդով և խոր հավատքով կարգել են այս սքանչելի արարողությունը նման սրբազան առիթների համար:

Այսօր դուք վկա եք այս չորս երիտասարդ վարդապետների ձեռնադրության, որոնք ստացան եպիսկոպոսական օծում և աստիճան մեր Հայրապետական ձեռքով: Մենք հավատում ենք Ս. Հոգու զորության, Մենք հավատում ենք, որ Աստված և Իր Միածին Որդին և Ս. Հոգին մի Աստվածություն են կազմում, նրանք լուսավորում են մեր ժողովրդին, մեր ազգի զավակների հոգիներն ու լուսավորում նրանց կյանքի ճանապարհը և դարձնում են արժանի հավիտենական կյանքին: Մենք հավատում ենք, որ այս կյանքը, որ մենք ապրում ենք, անիմաստ չէ, աննպատակ չէ և պարզապես ժամանց չէ: Մենք մի ժողովուրդ ենք, որ կյանքի լրջության զգացմունքը ունենք, ավելի նույնիսկ՝ այս կյանքը ապրելու հերոսական ըմբռնումը, ինչպես մեր ժողովուրդը ապացուցեց բազում անգամներ մեր պատմության ընթացքում և նաև մեր տագնապալի այս օրերին՝ վերջին երկու տարվա ընթացքում: Ողջ մեր ժողովուրդ ի Հայաստան, ի Արցախ և ի արտասահման, նույն ոգով ոռնվեցին, նույն Ս. Հոգով լուսավորվեցին և անդրադարձան իրենց կյանքի մեծ առաքելության այս անցավոր կյանքի ճանապարհին, ծառայելու համար ճշմարտության, արդարության և ազատության, որոնք հոամալականներն են նաև քրիստոսի Ս. Ավետարանի:

Այո՛, ես համոզված եմ, որ մեր ժողովրդի քրիստոնեական զգացմունքը արթնացավ և մեծաթես նպաստեց համազգային այս ոգեշնչումին և պայքարին: Անհավասիկ նույն Ս Հոգին է, որ իջավ մեր չորս եպիսկոպոսների վրա, չորսն էլ երիտասարդ են, հազիվ քառասուն տարեկանին մոտեցած, բայց ամեն մեկը պատասխանատու պաշտոնների են կոչված իրենց երկրներում իբրև թեմական առաջնորդներ, այսինքն իբրև հոգևոր առաջնորդներ մեր ժողովրդին: Ձեռնադրվեց Գիսակ եպիսկոպոսը Արգենտինայի թեմի վրա, Խաժակ եպիսկոպոսը Միացյալ Նահանգաց Արևելյան մեծ թեմի վրա, Հակոբ եպիսկոպոսը Ուրուգվայի (Հարավային Ամերիկայի) թեմի վրա և վերջապես Հովնան եպիսկոպոսը Կանադայի թեմի վրա:

Այս երկրների անունները լսելով վստահ ենք, թե անդրադարձաք, թե ինչքան պատասխանատու և կարևոր պաշտոններ են վստահվում նրանց իրենց ժողովրդի կողմից և Մեր հաստատումով ու Մեր օրհնությամբ:

Մաղթում ենք, որ Ս. Հոգին միշտ հովանի մնա նրանց վրա և առաջնորդող ուժ, որպեսզի ամբասիր կերպով ծառայեն Աստծուն, մեր Ս. Եկեղեցվույն և մեր հավատացյալ ժողովրդին՝ լինելով մշակներ առանց ամոթո: Նրանք չորսն էլ Մեզ քաջ ծանոթ են: Նրանք իրապես Եկեղեցու արժանավոր սպասավորներ են եղել մինչև հիմա, և տարիներ շարունակ ծառայել են ժողովրդին, իսկ այժմ եպիսկոպոսական բարձր աստիճանով, առավել հոգևոր եռանդով, առավել պատասխանատվության զգացումով պիտի շարունակեն իրանց ծառայությունը մինչև խոր ծերություն:

Մաղթում ենք, որ առնվազն կես դար շարունակ ծառայեն մեր Եկեղեցուն: Եվ մենք աղոթենք, սիրելի հավատացյալներ, որ Աստված քաղցրությամբ ընդունի նրանց ուխտը և միշտ մնա նրանց մարտակից: Իսկ մենք, ժողովուրդ և հոգևորականներ, հոգեպես մխիթարվենք նրանց հետագա գործունեությամբ՝ հոգևոր, կրթական, ազգային և հայրենասիրական իրագործումներով:

«Ողջ լերուք զօրացեալ Ս. Հոգւով և յաւէտ օրհնեալ ի Տեառնէ և ի մէնջ, ամէն»:

Հայոց Հայրապետի ոգեշունչ խոսքից հետո շարունակվում է ս. պատարագի հոգեպարար արարողությունը:

Սրբազան պատարագի ավարտից հետո նորաօծ եպիսկոպոսների պատվին միաբանական սեղանատանը տրվում է ճաշկերույթ, որին ներկա են լինում նորընծա սրբազան հայրերը, Մայր Աթոռի միաբանները, ներքին և արտաքին թեմերից ժամանած հոգևորականներ և եկեղեցական իշխանությունների ներկայացուցիչներ, ուխտավորներ և նորապսակ եպիսկոպոսների ծնողները: Ճաշկերույթի ժամանակ նորաօծ սրբազան հայրերին շնորհավորանքի և ուրախության խոսք ասացին Վեհափառ Հայրապետը, Ամերիկայի հայոց Արևմտյան թեմի առաջ-

նորդ Տ. Վաչե արքեպս. Հովսեփյանը և ուրիշներ:

Ճաշկերույթի ավարտին նորապսակ եպիսկոպոսները երախտագիտության խոսք ասացին՝ մեկ անգամ ևս շեշտելով, որ հավատարիմ կմնան իրենց ուխտին ու Սուրբ Էջմիածնին, առավել նվիրվածությամբ ու ջանասիրությամբ շարունակելու ծառայությունը աշխարհասփյուռ հայ ժողովրդին:

Հոկտեմբերի 8-ին, երկուշաբթի օրը, նորաօծ եպիսկոպոսները իրենց ուխտի պատարագը մատուցեցին Ս. Էջմիածնի Մայր տաճարում, Ս. Հռիփսիմե, Ս. Գայանե և Ս. Հաղարծին վանքերում:

***

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը ևս ջերմագին շնորհավորում է նորապսակ սրբազան հայրերին՝ այն հույսով ու հավատով, որ նրանք իրենց ողջ ուժերն ի սպաս կդնեն Հայաստանյայց Եկեղեցու և հայ ժողովրդի ծառայությանը:

ԷԴՎԱՐԴ ՍՐԿ. ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ